**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**
**հիմնադրամի կարիքների համար համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի «ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի**

**ք. Երևան, Տիգրան Մեծի 17** **16 մայիսի 2022թ.**
**ժամը՝ 15 :00**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝** **Մ. Հարությունյան**
**Հանձնաժողովի անդամներ՝** **Դ. Սարգսյան, Գ. Վարդանյան**
**Հանձնաժողովի քարտուղար՝** **Ս. Ավետիսյան**

### *1. Տեղեկատվություն նիստի վերսկսման մասին*

**Նիստը վերսկսվեց 16.05.2022թ. ժամը 15:00-ին:**

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ -ն սահմանված ժամկետում էլ.աճուրդ համակարգի միջոցով կցել է շտկման պատասխանը, որում մասնավորապես նշել է որ չի առաջարկելու նախահաշվային գնին համապատասխան համակարգիչ: Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ-ի հետ պայմանագիր չի կնքվում, քանի որ վերջինիս կողմից առաջարկված գինը տվյալ ապրանքանիշի համար շուկայական արժեքից բարձր էր և հակասում էր Գնումների մասին ՀՀ օրենքի սկզբունքներին՝ տնտեսող, արդյունավետ և օգտավետ չէր:

### *2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի վերաբերյալ*

**16.05.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

2.1 21-րդ չափաբաժնի մասով՝ Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:
2.2 Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի, 4-րդ ենթակետի՝ ընթացակարգի ***21-րդ չափաբաժինը*** հայտարարել չկայացած:
2.3 Հաստատել ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով ընթացակարգի՝ 1-21րդ, չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0***

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Հարությունյան

անդամներ՝ _____ Դ. Սարգսյան

_____ Գ. Վարդանյան

Քարտուղար՝ _____ Ս. Ավետիսյան